ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2129 - Ա **06 ապրիլի 2009թ.**

ԳԼԻՆԿԱՅԻ ՓՈՂՈՑԻ ՆՐԲԱՆՑՔԻ Հ. 3/2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՌԻՓՍԻՄԵ ՀԱՅԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՀԱՅԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հռիփսիմե Հայկի Մկրտչյանի (ծնված 07.09.1986թ.), Հասմիկ Հայկի Մկրտչյանի (ծնված 14.02.1990թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Գլինկայի փողոցի նրբանցքի հ.3/2 հասցեում Հռիփսիմե Հայկի Մկրտչյանին, Հասմիկ Հայկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի մակերեսը 64.02քմ է (վկայական տրված 27.12.1996թ. հ.733):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1996 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 28.03.2008թ. հ.1258ա, <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 31.03.2009թ. հ.20/2-Ե/162 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 19.03.2009թ. հ.20-Ել-1989 եզրակացությունը, համաձայն որի Գլինկայի փողոցի նրբանցքի հ.3/2 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Գլինկայի փողոցի նրբանցքի հ.3/2 հասցեում Հռիփսիմե Հայկի Մկրտչյանին, Հասմիկ Հայկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 64.02քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 64.02քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով:

3. Գլինկայի փողոցի 1-ին նրբանցքի հ.2 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Գլինկայի փողոցի նրբանցքի հ.3/2 տուն>>:

4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հռիփսիմե Հայկի

Մկրտչյանի, Հասմիկ Հայկի Մկրտչյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

5. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ